

«Medi-Cal»-ը տարեցների և հաշմանդամ երիտասարդների համար

Ուրբե՞ր իրավունք ունեն «Medi-Cal»-ում ընդգրկվելու

- 65 տարեկան կամ ավելի մեծ անձինք կամ հաշմանդամություն ունեցող երիտասարդները կարող են ընդգրկվել «Medi-Cal»-ում, եթե նրանք բավարարում են «Medi-Cal»-ի՝ եկամուտների և միջոցների վերաբերյալ պահանջները:

Որքա՞ն պետք է լինի իմ եկամուտը, որպեսզի «Medi-Cal»-ի իրավունք ունենամ

2011 թվականին Ձեր եկամուտը պետք է լինի՝

- ամսական \$1138 կամ ավելի քիչ, եթե Դուք միայնակ անձ եք.
- ամսական \$1536 կամ ավելի քիչ, եթե Դուք ամուսնական զույգ եք:

Որքա՞ն միջոցներ կարող եմ ես ունենալ, որպեսզի «Medi-Cal»-ի իրավունք ունենամ

Ձեր միջոցները չեն կարող գերազանցել՝

- \$2000-ը, եթե Դուք միայնակ անձ եք.
- \$3000-ը, եթե Դուք ամուսնական զույգ եք:

Լրացուցիչ տեղեկությունների համար
զանգահարեք Առողջապահական իրավունքների կենտրոն՝
(800) 824-0780 հեռախոսահամարով:
Չայերենի համար խնդրում ենք սեղմել 9:



Առողջապահական իրավունքների կենտրոնը (CHCR) Կալիֆոռնիայում գործող՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որն անվճար տեղեկատվություն և օգնություն է տրամադրում «Medicare»-ի հարցում: Այս թերթիկը ֆինանսավորվել է «Առողջապահական տեղեկությունների հարցում խորհրդատվության և պաշտպանության ծրագրի» (HICAP) / «Առողջության ապահովագրման հարցում օժանդակության նահանգային ծրագրի» (SHIP) կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

Ի՞նչն է «Medi-Cal»-ը համարում միջոցներ

- Միջոցներ են համարվում Ձեր բանկային հաշիվները և տնից բացի այլ սեփականությունը:
- Միջոցներ չեն համարվում Ձեր տունը, մեկ մեքենան և անձնական իրերը:

Ի՞նչ ծառայություններ են վճարվում «Medi-Cal»-ի կողմից

«Medi-Cal»-ը վճարում է՝

- հիվանդանոցի և բժշկի ծառայությունների համար.
- երկարատև խնամքի համար ծերանոցում.
- շտապ ատամնաբուժական օգնության համար և
- «Medicare»-ի D Բաժնով չվճարվող դեղատոմսային դեղերի համար:

Ես «Medicare»-ի D Բաժնի դեղերի ծրագրին անդամագրվելու կարիք ունե՞մ, եթե «Medi-Cal» ունեմ

- Եթե Դուք «Medicare» և «Medi-Cal» ունեք, Դուք պետք է անդամագրվեք «Medicare»-ի D Բաժնի դեղերի ծրագրին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք մեր՝ **«Medicare-ի D Բաժինը Medicare և Medi-Cal ունեցող անձանց համար»** գովազդային թերթիկը:

«Medi-Cal»-ը վճարում է «Medicare»-ի կողմից չվճարվող բժշկական ծախսերի համար

Այո: «Medi-Cal»-ը վճարում է՝

- Ձեր «Medicare»-ի B Բաժնի ամսական ապահովագիւնը և համավճարումները.
- երկարատև խնամքի համար ծերանոցում.
- շտապ ատամնաբուժական օգնության համար և
- «Medicare»-ի D Բաժնով չվճարվող դեղերի, օրինակ՝ հանգստացնող դեղերի (բենզոդիազեպինների), քնաբեր դեղերի (բարբիտուրատների) և առանց դեղատոմսի վաճառվող այն դեղերի ու վիտամինների համար, որոնց համար վճարում է նախատեսված «Medi-Cal» ծրագրով:

Դեռ հարցե՞ր ունեք:
Ջանգահարեք Առողջապահական իրավունքների կենտրոն՝
(800) 824-0780 հեռախոսահամարով:
Հայերենի համար խնդրում ենք սեղմել 9:
